



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 դեկտեմբերի 2016 թվականի N 1311 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1555-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Երևանի քաղաքապետարանի միջոցով «Երևանի Վ. Մայակովսկու անվան թիվ 7 հիմնական դպրոց» և «Երևանի թիվ 147 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություններին տրամադրելու նպատակով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարությանը հատկացնել 1,269.7 հազ. դրամ՝ Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածով):

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի կատարումն

ապահովող միջոցառումների մասին» N 1555-Ն որոշման N 11 հավելվածում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:

3. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարին՝ սույն որոշման 1-ին կետով տրամադրվող գումարները հատկացնել Երևանի քաղաքապետարանին՝ որպես պետության կողմից Երևանի համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորում՝ բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչի իրավունքները վերապահելով Երևանի քաղաքապետարանին, պայմանով, որ Երևանի քաղաքապետարանի կողմից սույն որոշմամբ նախատեսված բյուջետային միջոցների տնօրինման և դրա շրջանակներում Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվությունները սահմանված կարգով կներկայացվեն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

4. Առաջարկել Երևանի քաղաքապետին սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկ շաբաթյա ժամկետում «Երևանի Վ. Մայակովսկու անվան թիվ 7 հիմնական դպրոց» և «Երևանի թիվ 147 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների հետ կնքել Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի ապրիլի 16-ի N 393-Ա և 2015 թվականի ապրիլի 22-ի N 437-Ա որոշումներով նախատեսված դրամաշնորհի պայմանագրեր՝ համապատասխանաբար 429.9 հազ. դրամի և 839.8 հազ. դրամի չափով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

2016 թ. դեկտեմբերի 22
Երևան



Կ. ԿԱՐԱՊԵՏԱՆ

Հավելված N 1
 ՀՀ կառավարության 2016 թվականի
 դեկտեմբերի 22-ի N 1311 - Ն որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1555-Ն ՈՐՈՇՄԱՆ
 N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 11.8 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ**

Չափորոշիչներ		Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով)	
		ոչ ֆինանսական ցուցանիշներ	ֆինանսական ցուցանիշներ
		տարի	տարի
ՄԱՍ Գ: Նախարարի պատասխանատվության ներքո իրականացվող քաղաքականության միջոցառումների և ֆինանսական կառավարման արդյունքների ցուցանիշները			
1. Քաղաքականության միջոցառումներ			
1.2. Տրանսֆերտներ			
Ծրագրային դասիչը	Անվանումը		
1146	ԾՏ 53	Վարձակալների կողմից փաստացի ՀՀ պետական բյուջե վճարված գումարների 20 տոկոսի հատկացում «Երևանի Վ. Մայակովսկու անվան թիվ 7 հիմնական դպրոց» և «Երևանի թիվ 147 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ներին	
		Նկարագրությունը	
		ՀՀ կառավարության 2015 թվականի ապրիլի 16-ի N 393-Ա և 2015 թվականի ապրիլի 22-ի N 437-Ա որոշումների 4-րդ կետերի հիման վրա «Երևանի Վ. Մայակովսկու անվան թիվ 7 հիմնական դպրոց» և «Երևանի թիվ 147 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ներին ամրացված տարածքների վարձակալությունից ստացված միջոցների 20 տոկոսի չափով դրամաշնորհի հատկացում նշված ՊՈԱԿ-ներին՝ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից:	
Շահառուների քանակը		2	
Գումարը (հազ. դրամ)			1,269.7
Տրանսֆերտի վճարման հաճախականությունը			
Շահառուների ընտրության չափանիշները		ՀՀ կառավարության 2015 թվականի ապրիլի 16-ի N 393-Ա և 2015 թվականի ապրիլի 22-ի N 437-Ա որոշումների հիման վրա կնքված վարձակալության պայմանագրեր	

Համայնքը	Երևանի քաղաքապետարան
Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը	
1146 Հանրակրթության ծրագիր	
Վերջնական արդյունքի նկարագրությունը	
Հանրակրթական մակարդակում սովորողների ընդգրկվածության, գրագիտության և համակողմանի զարգացման բարձր մակարդակի ապահովում	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 2
 ՀՀ կառավարության 2016 թվականի
 դեկտեմբերի 22-ի N 1311 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1555-Ն ՈՐՈՇՄԱՆ
 N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 12 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
 Բաժին 2.

Գերատեսչության կողմից իրականացվող քաղաքականության միջոցառումների ծրագրային խմբավորումը

Ծրագրային դասիչը		Գործառական դասիչը	Ծրագիրը/քաղաքականության միջոցառումը	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով)
ծրագիրը	միջոցառումը	(բաժինը/խումբը/դասը)		ՀՀ 2016 թ. պետական բյուջե (հազ. դրամ)
1146			ԾՐԱԳԻՐ	
			Հանրակրթության ծրագիր	1269.7
			Ծրագրի նկարագրությունը	
			Տարրական, հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության ծառայությունների մատուցում	
			Վերջնական արդյունքի նկարագրությունը	
			Հանրակրթական մակարդակում սովորողների ընդգրկվածության, գրագիտության և համակողմանի զարգացման բարձր մակարդակի ապահովում	
			Քաղաքականության միջոցառումներ. Տրանսֆերտներ	
	ՄՏ53		Վարձակալների կողմից փաստացի ՀՀ պետական բյուջե վճարված գումարների 20 տոկոսի հատկացում «Երևանի	1,269.7

		<p>Վ. Մայակովսկու անվան թիվ 7 հիմնական դպրոց» և «Երևանի թիվ 147 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ներին</p> <p>Տրանսֆերտի նկարագրությունը</p> <p>ՀՀ կառավարության 2015 թվականի ապրիլի 16-ի N 393-Ա և 2015 թվականի ապրիլի 22-ի N 437-Ա որոշումների 4-րդ կետերի հիման վրա «Երևանի Վ. Մայակովսկու անվան թիվ 7 հիմնական դպրոց» և «Երևանի թիվ 147 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ներին ամրացված տարածքների վարձակալությունից ստացված միջոցների 20 տոկոսի չափով դրամաշնորհի հատկացում նշված ՊՈԱԿ-ներին՝ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից</p>	
--	--	---	--

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ



Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ